ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հետազոտական աշխատանք

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ և ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏՈՂ՝ ԵՐԵՎԱՆԻ Վ.ՏԵՐՅԱՆԻ ԱՆՎ. ԹԻՎ **60** ՀԻՄՆ.ԴՊՐՈՑԻ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՔՍ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ **2022** թ.

| | |
|---|---|
| **Կազմակերպության տվյալներ**<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ.հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com |
| | |
| **Հետազոտության թեմա/վերնագիր**<br>• Հետազոտության թեմա | Մեսրոպ Մաշտոցի և գրերի գյուտի դերը ազգային ինքնության և պետության պահպանման գործում |
| | |
| **Ուսուցչի տվյալներ**<br>• Ա.Ա.Հ.<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Թագուհի Հովհանի Արզումանյան<br>Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի<br><br>Մայրենի, Հայոց լեզու և գրականություն<br>5-9- րդ դասարաններ |
| **Ուսումնական հաստատության տվյալներ**<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե (տնօրենության)<br>• Web կայքի հասցե | Երևանի Վ. Տերյանի անվ. թիվ 60հիմն. դպրոց<br>Տիգրան Մեծի 43<br>010570070<br>teryan60@mail.ru<br>yrevan60.schoolsite.am |

## Բովանդակություն

| |
|---|
| Բովանդակություն |

.................................................1
Հետազոտական աշխատանք........................................ 1
Տիտղոսաթերթ........................................ 1
Բովանդակություն........................................ 2
Ներածություն........................................ 4
Պարագրաֆներ/մասեր........................................ 5
Գրականության ակնարկ........................................ 7
Օգտագործված մեթոդները........................................8
Եզրակացություններ,առաջարկություններ........................................17
Օգտագործված գրականության ցանկ........................................20
Հավելվածներ
Հավելված 1 Հետազոտական հարցաթերթիկ-----------------------------------------22
Հավելված 2
Տեքստի <<Քարտեզ>>-----------------------------------------24

**Ներածություն**

| | |
|---|---|
| **Նպատակը եւ հետազոտական հարցը** | Նպատակը. 1.Սովորողը գիտակցի հայ ժողովրդի կյանքում գիր ունենալու անհրաժեշ-տությունը: 2.Սովորողն արժևորի Մեսրոպ Մաշտոցի դերը հայ գրերի ստեղծման գործում: 3.Սովորողը գիտակցի գրերի գյուտի դերը հայ ազգային ինքնության և պետության |

| | |
|---|---|
| | պահպանման գործում:<br>Հետազոտական հարց.<br>Մ. Մաշտոցը անցավ փործությունների երկար ճանապարհ՝ հանուն իր երկրի ինքնության պահպանման. ի՞նչ է պետությունը, արդյոք մենՙք պետք է օգնենք մեր պետության հզորացմանը, թե պետությունը պիտի օգնի մեզ՝ լավ ապրելու համար:Ի՞նչ կարող է անել սովորողը իր պետության զարգացման համար: |
| | |
| **Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար** | Թեմայի կարևորությունն այնքան մեծ է 9-րդ դասարանում սովորողների համար, որ պատմություն կերտող այս երեք հայրենասեր ուժերի՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և Վռամշապուհ արքայի հերոսական և անձնվեր գործունեության ուսուցման միջոցով անհրաժեշտ է սովորողի մոտ զարգացնել պետական մտածողությունը և ազգային ինքնությունը պահպանելու գաղափարը: |
| | |
| **Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը** | 1.Սովորել սովորելու կարողունակություն<br>2.Մշակութային կարողունակություն<br>3.Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն<br>4. Ժողովրդավարական և սոցիալական կարողունակություն |
| | |
| **Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին** | Հայոց լեզվի և գրականության վերապատրաստման <<Ոչ գրական տեքստի ուսումնասիրություն>> թեմայի շրջանակու կատարվեց անդրադարձ , որի արդյունքում առաջացավ հետազոտության այս հարց-թեման. վերապատրաստող՝ Մ.գ.թ.,դոցենտ՝Թամար Ալեքսանյան: |

## Պարագրաֆներ/մասեր

### Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,
- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

**<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**

### Ներածություն

o2009թ-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն Ուսուցիչը այն մանկավարժական աշխատողն է,որը
o դասապրոցեսի միջոցով ապահովում է ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը և անմիջականորեն պատասխանատու է այդ գործընթացի համար: (Հոդված 3)

o (2022թ. հուլիս.ՀՊՉՀ ևՀԼԳ) Հայոց(մայրենի)լեզվի, գրականության, հայ գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում: Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում մշակվում և ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ մայրենի լեզուն՝ որպես ՀՀ պետական լեզու, անկախ պետականության պահպանման, զարգացման կարևորագույն երաշխիքն է, անփոխարինելի նշանակություն ունի ինչպես հենց իր՝ սովորողի, այնպես էլ ողջ հայ ժողովրդի կյանքում:Սովորողը հայոց լեզվից, գրականությունից գիտելիք, որոշակի հմտություններ ձեռք բերելով հանդերձ՝ ուսումնասիրում է մայրենի լեզուն՝ որպես ինքնության բացահայտման և դրսևորման,որպես հաղորդակցման, համագործակցության, այլ ոլորտներից գիտելիքներ ձեռք բերելու, օտար լեզուներ սովորելու անփոխարինելի միջոց:Մայրենի լեզվի և գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև Հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի նիստուկացը,հավատալիքները, կենցաղը, սովորույթները:
Ազգային ոգին և մշակույթը արժևորելու, գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր,պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում:

- (ՀՊՉ) Հանրակրթության պետական Չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է սովորողներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:
- (ՀՊՉ) Ըստ ժողովրդավարական և ֆաղաֆացիական կարողունակության՝ սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարֆության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանֆ ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիֆի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանֆն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական ֆաղաֆացիական պարտֆը, ֆաղաֆացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմֆ: Նրանֆ ճանաչում են հասարակության կյանֆի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանֆ, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինֆնուրույն որոշումներ կայացնելու, դրանֆ իրագործելու ունակություն և հետևանֆների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:
- (ՀՊՉ) խնդիրների լուծման ընթացֆում կիրառել վերլուծական մոտեցումներ, որոնֆ թույլ են տալիս ընդհանրացնել ստացված տեղեկատվությունը և համապատասխան եզրահանգումներ կատարել ուսումնասիրվող խնդրի շուրջ:

<table>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td>Օգտագործված մեթոդները, գործիքները</td><td>Հետազոտությունը կատարված է փաստաթղթերի վերլուծության մեթոդով, որի մեջ ցանկացած տեղեկություն պարունակող օբյեկտ, մասնավորապես՝<br>○ նկարներ(դասաժամերին ցուցադրվել են 3 պատմություն կերտողների՝ Մ.Մաշտոցի, Վռամշապուհ արքայի, Սահակ Պարթև կաթողիկոսի նկարները),<br>○ հոլովակներ(ցուցադրվել է տեսանյութ՝ <<Մեսրոպ Մաշտոց>> խորագրով YuTube ),<br>○ կենսագրություններ(Մ. Մաշտոց. Կորյուն),<br>○ հարցվեվություններ(հարցաթերթիկի միջոցով),<br>o ռեֆերատներ<br>o մեդիա գործիքներ<br>համարվում են հետազոտության օբյեկտ:<br>Փաստաթղթերի վերլուծության 2 մեթոդներից՝ ավանդական և բովանդակային, ընտրվել է փաստաթղթերի ավանդական վերլուծությունը, որը թույլ է տալիս բացահայտել փաստաթղթում առկա հիմնական մտքերը և գաղափարները, հետևել դրանց ծագումնաբանությանը, բացահայտել դրանց հիմնական տրամաբանությունը և չափել հետևանքները: Վերապատրաստման արդյունքում իմ ստացած գիտելիքի, կարդացած գրականության հիման վրա մշակել եմ կրթական լրացուցիչ ուսումնական նյութ/ըստ Թ. Ալեքսանյանի վերապատրաստման դասընթացում տրված նյութերի/, դրանք փորձարկել և այդպես կազմել իմ հետազոտական աշխատանքը:<br><br>Ոչ գրական տեքստի ուսումնասիրում<br>և վերարտադրում<br>Նպատակները<br>O Ուսումնաճանաչողական կամ ոչ գրական</td></tr>
</table>

տեքստի շրջանակի ընկալում:

- Տեքստային աշխատանքից ընդհանրական կամ հիմնական գաղափարին հասնելու ուղիների մատնանշում:
- Տեքստի վերարտադրության կամ հաղորդման տարբեր եղանակների կիրառություն:

Երբ կարդում ենք տեքստը

| | |
|---|---|
| Հասկանալ տեքստի բովանդակային շրջանակը: | Դիտողականության զարգացում: |
| Հասկանալ դեպքերի հաջորդական ընթացքի դերը խնդրի լուծման հարցում: | Քննադատական մտածողության զարգացում: |
| Ինքնուրույնաբար հասկանալ և նշել գլխավոր հասկացությունը | Հասկացություններով մտածելու և վերացար կելու կարողության զարգացում: |
| | Հաղորդակցման զարգացում |

## ՏԵՔՍՏԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ

| | | |
|---|---|---|
| ԺԱՄԱՆԱԿԸ (ե՞րբ) | ՎԱՅՐԸ (որտե՞ղ) | ԽՆԴԻՐԸ (ի՞նչ) |
| ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ինչպե՞ս) | ԽՆԴԻՐԸ ՄԱՍՆԱ ՆՇՈՂՆԵՐԸ (ո՞վ կամ ովքե՞ր) | ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ (ի՞նչ արեցին |

## ՎԱՅՐԸ

| ՏԵՔՍՏԻՑ ԸՆՏՐԵԼ, ԴՈՒՐՍ ԳՐԵԼ ՎԱՅՐԸ ՆՇՈՂ | ՏԵՔՍՏԻՑ ԸՆՏՐՎԱԾ |
|---|---|
| Բառեր | |
| Բառակապակցու թյուններ | |
| Նախադասու | |

| թյուններ | |
|---|---|

ԽՆԴԻՐԸ

Օ Ե՞րբ է ի հայտ գալիս

Օ Ո՞վ է մատնանշում

Օ Ի՞նչ հանգամանքներում

Օ Ո՞ւմ է դիմում

Օ Ի՞նչ ճանապարհ է ցույց տալիս

ՈՎՔԵ՞Ր

| Տեղեկություններ | Վռամշապուհ արքա | Սահակ Պարթև | Մեսրոպ Մաշտոց |
|---|---|---|---|
| Ծննդավայրը | | | |
| Ծննդյան թիվը | | | |
| Կրթությունը | | | |
| Զբաղմունքը | | | |
| Հասարակական դիրքը | | | |
| Խնդրի լուծման համար կատարած քայլերը | | | |

Ովքե՞ր



Կաթողիկոս Սահակ Պարթև





Մսրոպ Մաշտոց

Խնդրի լուծման համար ի՞նչ քայլեր
են անում

| ՔԱՅԼԵՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒ<br>ԹՅՈՒՆ |
|---|---|
| 1-ին | Մարդ են ուղարկում Դանիել Ասորու մոտ, բերում են նշանագրերը |
| 2-րդ | Մաշտոցը աշակերտներ է հավաքում, սկսում է սովորեցնել |
| 3-րդ | Տեսնում է, որ նշագրերը չեն համապատասխա<br>նում մեր լեզվի հնչյունական համակարգին |
| 4-րդ | Տեղեկացնում է թագավորին և կաթողիկոսին |
| 5-րդ | Թագավորը միջոցներ է տրամադրում |
| 6-րդ | Մաշտոցը աշակերտների խմբով մեկնում է արտասահման |
| 7-րդ | Գրերի գյուտ |

ԱՐԴՅՈՒՆՔ



ՃԱՆԱՉԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ
ԵՎ ԶԽՐԱՏ ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ
ՀԱՆՃԱՐՈՅ

Աստվածաշունչ

Սողոմոնի առակներ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| | |
|---|---|
| Տեքստից գտի՛ր այն նախադասությունը, որը գրերի գյուտի պատմական նշանակության մասին է: | Քո կարծիքը. համամի՞տ ես դասագրքիդ հեղինակների հետ, ի՞նչ ապացույցներ ունես: |

## ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻՑ ՀԵՏՈ

Տեքստից գտիր այն հատվածները, որոնք ցույց են տալիս գրերի գյուտից հետո կատարված քայլերը:



## ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| | |
|---|---|
| Տեքստից գտի՛ր այն նախադասությունը, որը գրերի գյուտի պատմական նշանակության մասին է: | Քո կարծիքը. համամի՞տ ես դասագրքի հեղինակների հետ, ի՞նչ ապացույցներ ունես: |

## ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Ի՞ՆՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԾՆՎԵՑ ՔՈ ՄՏՔՈՒՄ:

ՓՈՐՁԻ՛Ր ՄԵԿ ԲԱՌՈՎ ԲՆՈՒԹԱԳՐԵԼ ՏԵՔՍՏԻՑ ՍՈՎՈՐԱԾԴ:

- ԻՆՉՈ՞Ւ

Աշակերտները հիմնավորում են և բերում ապացույցներ ու փաստեր

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեքստի բովանդակային շրջանակը պարզելով, տեքստային մանրամասն աշխատանք կատարելով՝ հանգում են
գլխավոր կամ հիմնական հասկացությանը.
այս դեպքում կարող են լինել մի քանի տարբերակ՝

- ԶԱՐԳԱՑՈՒՄ
- ԱՌԱՋԸՆԹԱՑ
- ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

| | |
|---|---|
| | ԻՆՉՊԵՍ ՀԱՂՈՐԴԵԼ ՏԵՔՍՏԸ<br>o Հակիրճ և սեփական բառերով:<br>oՈրպես ականատես (պատկերացրո՛ւ, որ դու oՄաշտոցի աշակերտն ես):<br>oՄենախոսություն (առաջին դեմքով է պատմում, սեփական բառերով):<br>oԵրկխոսություն (զրուցում են երկու հոգի, oիրար հարցեր են տալիս, պատասխանում են հարցերին):<br><br>oՕրագիր (Վռամշապուհ արքայի, Մաշտոցի աշակերտներից մեկի):<br>oՆամակ (նամակ ես գրում ընկերոջդ, պատմում ես գրերի գյուտի մասին):<br>oԹանգարանի աշխատակից. էքսկուրսավար:<br>oՏեսաֆիլմ (գրերի գյուտի, Մեսրոպ Մաշտոցի մասին) . դիտում, քննարկում<br>oՍահիկաշար<br>oՆկարազարդում. բացատրություններով |
| | |
| | |
| | |
| **Իրականացման ժամանակահատվածը** | 01.09<br>25.09. |
| | |
| **Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/** | 9-րդ դասարանում սովորող<br>20 աշակերտ՝ 10 տղա<br>10 աղջիկ |
| | |

## Եզրակացություններ, առաջարկություններ

| | |
|---|---|
| **Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին** | Հետազոտական աշխատանքի վերջնարդյունքը իրականացրել եմ հարցաթերթիկի միջոցով.իմ հետազոտական հարցն է. «Մ. Մաշտոցը անցավ փորձությունների երկար ճանապարհ՝ հանուն իր երկրի ինքնության պահպանման. ի՞նչ է պետությունը, արդյոք մե՞նք պետք է օգնենք մեր պետության հզորացմանը, թե պետությունը պիտի օգնի մեզ՝ լավ ապրելու համար:Ի՞նչ կարող է անել սովորողը իր պետության զարգացման համար:»<br><br>Ծրագրային թեմայի ուսուցմանը տրվող դասաժամերի ընթացքում (Մեսրոպ Մաշտոց.գրերի գյուտ:Մաշտոցի կենսագրությունն ու գործունեությունը: Կորյուն. «Վարք Մաշտոցի»: Գրերի գյուտի պատմական նշանակությունը) ձգտել եմ հասնել այն վերջնարդյունքին, որ 5-րդ դարի պատմություն կերտողների՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և Վռամշապուհ արքայի անձնվեր և պետականամետ պատմական դեմքերի գործունեության օրինակով սովորողի մոտ զարգանա պետական մտածողությունը: Թեման ուսումնասիրելուց հետո կազմել եմ հարցաթերթ, որոնք անանուն են՝ իմ հետազոտական հարցի արդյունքը պարզելու համար:<br><br>Ելնելով տարիքային առանձնահատկությունից (9-րդ դասարանում Հասարակագիտություն առարկան նոր են սկսում ուսումնասիրել)՝հարցաթերթի հարցերը՝<br><br>1.սովորողին մոտիվացնող են,<br><br>2.ոչ թեստային են<br><br>3.իրենց մեջ պարունակում են նաև պատասխան, |

4. ուսուցանող են,

5.հարցերի մեջ կա մեկ սադրող հարց(միջավայրի տրամադրվածությունը պարզելու նպատակով).

օԻնչպե՞ս է բաշխում պետությունն իր

ֆինանսական միջոցները, ուր են ուղղվում

այդ միջոցները.

ա.բանակին,առողջապահությանը, կրթությանը, մանկատներին, ծերանոցներին, սոցիալական այլ խմբերին:

բ. կառավարության անդամների անձնական

կարիքներին:

Ի ուրախություն ինձ՝ այս հարցին 20 աշակերտից «բ» պատասխան էր տվել միայն 6 աշակերտ, իսկ մնացած 14 աշակերտները պատասխանել էին «ա» տարբերակը՝ ա.բանակին,առողջապահությանը, կրթությանը, մանկատներին, ծերանոցներին, սոցիալական այլ խմբերին:

6.Ինձ համար շատ կարևոր էր պարզել 6-րդ հարցի պատասխանը. «Պետությո՞ւնն է պարտավոր հոգալ ժողովրդի բոլոր կենսական կարիքները, թե մե՞նք ենք պարտավոր մեր ամենօրյա աշխատանքով նպաստել պետության զարգացմանն ու հզորացմանը»:

Այս հարցին,որ մենք ենք պարտավոր օգնել մեր երկրի հզորացմանը, պատասխանել էին 16 աշակերտ, 4 աշակերտ չէին կողմնորոշվել պատասխանի մեջ և բաց էին թողել հարցը:

7. 7-րդ հարցի բոլոր ենթակետերին 20 աշակերտ պատասխանել էին՝«այո».

Որպես աշակերտ ՝ դու ինչպե՞ս կարող ես քո ներդրումն ունենալ հայոց պետության զարգացման և հզորացման գործում.

ա.պահպանելով դպրոցի գույքը(ինչու՞):

բ.պահպանելով դասագիրքը(ինչու՞):

գ. պահպանելով շրջակա միջավայրը(ինչու՞):

դ.լավ սովորելով(ինչու՞):

ե.խնայելով էլեկտրաէներգիան, գազը, ջուրը (ինչու՞):

է.անաղարտ պահելով հայոց լեզուն,

8. Իմ հետազոտական աշխատանքի վերջնարդյունքը պարզող հարցն է. «Գիտակցու՞մ ես քո դերը պետության զարգացման և հզորացման գործում(դիմացի սյունակում գրել՝ այո կամ ոչ)»:

Պատասխանել են՝

11 սովորող՝ «այո», 1 սովորող՝«ավելի քան՝ այո»,1 սովորող՝«մենք մեր հերթին պետք է ամեն ինչ անենք մեր պետության հզորացման համար », 5 սովորող հարցին չեն պատասխանել,1 սովորող պատասխանել է՝«դեռ ոչ»:

Եզրակացություն,պատասխան հետազոտական հարցին

Ես իմ առջև խնդիր էի դրել «Մեսրոպ Մաշտոց.գրերի գյուտ:Մաշտոցի կենսագրությունն ու գործունեությունը: Կորյուն. «Վարք Մաշտոցի»: Գրերի գյուտի պատմական նշանակությունը»ծրագրային թեմաներն այնպես ուսուցանել, որ սովորողը կարողանա՝

0 գիտակցել հայ ժողովրդի կյանքում գիր ունենալու անհրաժեշ-տությունը:

0 արժևորել Մեսրոպ Մաշտոցի դերը հայ գրերի ստեղծման գործում:

0 գիտակցել գրերի գյուտի դերը հայ ազգային ինքնության և պետության պահպանման գործում:

0 ունենալ որոշակի պատկերացումներ Մաշտոցի կենսագրության և գործունեության մասին,ապրած ժամանակաշրջանի մասին,

քարտեզագրել երկրային ուղին

0 անկողմնակալ և առանց նախապաշարումների վերաբերվել ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին

| | |
|---|---|
| | 0 վերլուծել հասանելի տեղեկույթը, ճանաչել, կառուցել և գնահատել փաստարկները<br>0 ճանաչել(նկարագրել) ոչ գրական և գրական տեքստը<br>0 խորությամբ պատկերացնել պատմություն կերտողների՝ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Վռամշապուհ արքայի ապրած ժամանակաշրջանը<br>0 Վեր հանել կենսագրական տվյալները՝ բացահայտելով ժամանակաշրջանը, անհատի նկարագիրը<br>0 քննարկել, հայտնել դիրքորոշում և կատարել գիտակցված ընտրություն աշխարհաճանաչողության ձևերի վերաբերյալ<br>Վեր հանված արդյունքներ<br>սովորողի մոտ զարգանա պետական մտածողությունը և ընկալի իր դերը պետության զարգացման և հզորացման գործում:<br>Ըստ հարցման արդյունքի ՝ 20 աշակերտից «Գիտակցու՞մ ես քո դերը պետության զարգացման և հզորացման գործում» հարցին<br>«այո» են պատասխանել 16 աշակերտ:<br>Ես հասել եմ իմ նպատակին՝ իրագործելով իմ առջև դրված խնդիրը. զարգացնել պետական մտածողությունը սովորողի մոտ 5-րդ դարի պատմություն կերտողների՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և արքա Վռամշապուհի պետականամետ գործունեության օրինակով: |
| | |
| **Այլ տեղեկատվություն** | |

## Օգտագործված գրականության ցանկ


1.Հանրակրթության մասին ՀՀ օրենք

2. 01.022 թ.ՀՊՉ և ՀԿԳՉ չափորոշիչ և ծրագիր

3.Թ. Ալեքսանյան.<<Վերապատրաստման նյութեր>>. 14.08.2022թ.

4.Գ. Թադևոսյան. <<Որակական սոցիալական հետազոտություններ.տեսություն, մեթոդաբանություն և մեթոդ>>.ուսումնական ձեռնարկ. Երևան, ԵՊՀ.հրատ.Արտագերս 2006թ.

5.Լիլիթ Բաբայան, Ս. Միչիկյան. <<Հետազոտության մեթոդներ>>. ՍՈՅԻԵՍ փորձագիտական կենտրոն.ԴԱՏԱ ծրագիր. 30.07.2021թ

6.Մ. Թադևոսյան, Ս. Խաչատրյան և այլք(հեղինակային կազմ). <<Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում>>

7. Ալեքսանյան Թ., Խոսքի ուսուցումը միջին դպրոցում, Եր., Էդիթ պրինտ, 2012:

8.Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն, ԱՑՐԵՔՍ, Եր., 2002:

9.Հարությունյան Գ., Նազարյան Ա., Համաշխարհային պատմություն, 7-րդ դասարան, Եր., Զանգակ, 2019:

# Հավելվածներ

## Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1.

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

| | ՀԱՐՑ | Պատասխան |
|---|---|---|
| 1 | Քո կարծիքով՝ ո՞վ է Մ. Մաշտոցը(հարցը կարող է ունենալ մի քանի պատասխան՝ դիմացի վանդակում նշելով այո կամ ոչ) | |
| | ա.ուսուցիչ | |
| | բ.հոգևորական | |
| | գ.քրիստոնեական քարոզիչ | |
| | դ.զինվորական | |
| | ե. գյուտարար | |
| | զ.ուսյալ մարդ | |
| | է.լուսավորիչ | |
| | ը.պետական գործիչ | |
| 2 | Հանուն հայոց պետականության և ազգային ինքնության պահպանման՝ ի՞նչ փորձությունների ուղի անցավ Մաշտոցը(դիմացի սյունակում գրել պատասխանը): | |
| 3 | Քո կարծիքով՝ ի՞նչ է պետությունը՝ | |
| | ա. Ուժ՝ մարդկանց ճնշելու համար | |
| | բ.քաղաքական իշխանություն | |
| | գ. ժողովրդի բնական պահպանման և ինքնարտահայտման միջոց | |
| | դ. Պետությունը նաև քաղաքական ինստիտուտների ամբողջություն է, որի գլխավոր նպատակն է հասարակության ամբողջականության պահպանումը: | |
| 4 | Ինչպե՞ս են գոյանում պետության ֆինանսական միջոցները՝ բյուջեն(դիմացի սյունակում գրել պատասխանը): | |
| 5 | Ինչպե՞ս է բաշխում պետությունն իր ֆինանսական միջոցները, ուր են ուղղվում այդ միջոցները. | |

| | | |
|---|---|---|
| | ա.բանակին,առողջապահությանը, կրթությանը, մանկատներին, ծերանոցներին, սոցիալական այլ խմբերին: | |
| | բ. կառավարության անդամների անձնական կարիքներին: | |
| 6 | Պետությու՞նն է պարտավոր հոգալ ժողովրդի բոլոր կենսական կարիքները, թե մե՞նք ենք պարտավոր մեր ամենօրյա աշխատանքով նպաստել պետության զարգացմանն ու հզորացմանը(դիմացի սյունակում գրել պատասխանը): | |
| 7 | Որպես աշակերտ ՝ դու ինչպե՞ս կարող ես քո ներդրումն ունենալ հայոց պետության զարգացման և հզորացման գործում(դիմացի սյունակում գրել՝ այո կամ ոչ). | |
| | ա.պահպանելով դպրոցի գույքը(ինչու՞): | |
| | բ.պահպանելով դասագիրքը(ինչու՞): | |
| | գ. պահպանելով շրջակա միջավայրը(ինչու՞): | |
| | դ.լավ սովորելով(ինչու՞): | |
| | ե.խնայելով էլեկտրաէներգիան, գազը, ջուրը (ինչու՞): | |
| | է.անաղարտ պահելով հայոց լեզուն | |
| 8 | Գիտակցու՞մ ես քո դերը պետության զարգացման և հզորացման գործում(դիմացի սյունակում գրել՝ այո կամ ոչ): | |
| | | |

Հավելված **2**

Տեքստի << Քարտեզ>>

| Հարցեր | Պատասխան<br>Գտի՞ր տեքստից |
|---|---|
| Ինչի՞ մասին է: | |
| Ո՞վ է պատմում: | |
| Ո՞վ է գլխավոր հերոսը | |
| Ի՞նչ է անում | |

| | |
|---|---|
| Ե՞րբ է: | |
| Ո՞րտեղ է: | |
| Ո՞րն է խնդիրը: | |
| Ո՞րն է հակադրությունը: | |
| Ի՞նչ լուծում է ստանում: | |
| Ինչպե՞ս /հումորով, համակրանքով, հակակրանքով,…/ է ներկայացվում: | |
| Ո՞րն է հեղինակի նպատակը/տեղեկացնել, զվարճացնել, համոզել, և այլն/: | |
| Տեքստի ժանրը կամ տեսակը /ոչ գրական տեքստ,պատմվածք, հեքիաթ, համառոտ վերապատմություն, երկխոսություն,պիես/: | |
| Ի՞նչ է սովորեցնում ինձ տեքստը: | |

Թամար Ալեքսանյան